ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 13.02.2019թ. հ.01/114 գրության՝ տեղեկացվում է, որ Ծարավ աղբյուրի փողոցի տրանսպորտային կապն Ավան վարչական շրջանի որոշակի հատվածի հետ ապահովվում է միկրոավտոբուսային հ.69 երթուղու, իսկ քաղաքի կենտրոնի հետ՝ միկրոավտոբուսային հ.38 և ավտոբուսային հ.2ա (այն շահագործվում է փորձնական կարգով, մեկ միավոր շարժակազմով՝ հիմնականում ապահովելով կապը Երևանի պետական համալսարանի հետ) երթուղիների միջոցով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ գործնականում հնարավոր չէ ապահովել անմիջական տրանսպորտային կապ Ծարավ աղբյուրի փողոցի և քաղաքի բոլոր թաղամասերի միջև:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ